



ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
«ՎԱՆԱԶՈՐԻ Հ. ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄ

Հաստատված է ամբիոնի նիստում

Քիմիայի և կենսաբանության

ամբիոնի անվանումը

Ամբիոնի վարիչ Ղազարյան Արմինե Հրայիկի /Ս.Ա.Հ/

Արձանագրություն № 13

«15» հունվարի 2025թ.

ՔԿ/բ 154 - Էվոլյուցիոն տեսություն ԴԱՍԸՆԹԱՑԻ

Դասիչ, դասընթացի անվանում

ՈՒՍՈՒՄՆԱՍԵԹՈՂԱԿԱՆ ՓԱԹԵԹ

Մասնագիտություն՝	<u>011401.00.6 Մասնագիտական մանկավարժություն</u> /դասիչ, մասնագիտության լրիվ անվանումը/
Կրթական ծրագիր՝	<u>011401.01.6 Կենսաբանություն</u> /դասիչ, կրթական ծրագրի լրիվ անվանումը/
Որակավորման աստիճան՝	<u>Մանկավարժության բակալավր</u> /բակալավր, մագիստրատուրա/
Ամբիոն՝	<u>Քիմիայի և կենսաբանության</u> /ամբիոնի լրիվ անվանումը/
Ուսուցման ձևը՝	<u>Հեռակա</u> /տոկա, հեռակա/
Կուրս/կիսամյակ	<u>5-րդ կուրս, 2-րդ կիսամյակ</u>
Դասախոս(ներ)՝	<u>Հասմիկ Մխիթարյան</u> /անուն, ազգանուն/
Էլ. հասցե/ներ	hasmik-mkhitaryan88@mail.ru

Վանաձոր- 2025թ.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. Դասընթացի դերը և տեղը կրթական ծրագրում..... 3

2. Դասընթացի նպատակը և խնդիրները..... 3

3. Դասընթացին մասնակցելու նախնական մուտքային գիտելիքները, կարողությունները և հմտությունները /դասընթացները/..... 3

4. Դասընթացը ձևավորում է հետևյալ կրթական վերջնարդյունք(ներ)ը և /կամ կոմպետենցիաները 3

5. Դասընթացի դերը կրթական ծրագրի շրջանավարտների գիտելիքների, կարողությունների և հմտությունների ձևավորման հարցում ըստ աշխատաշուկայի պահանջների..... 5

6. Դասընթացի ծավալը, ուսումնական աշխատանքի տեսակները, արդյունքների ամփոփման ձևերը 5

7. Ուսումնական աշխատանքների տեսակները..... 6

8. Դասավանդման մեթոդներ 7

9. Ուսումնառության մեթոդներ 7

10. Դասընթացի համառոտ բովանդակությունը, ուսումնական աշխատանքի ծավալը` ըստ բաժինների և թեմաների..... 9

11. Ուսումնամեթոդական գրականության ապահովման քարտ 10

12. Դասընթացի ուսումնամեթոդական քարտ 11

12.1. Դասախոսությունների ուսումնամեթոդական քարտ 11

12.2. Գործնական աշխատանքների /սեմինար պարապմունքների ուսումնամեթոդական քարտ..... 12

12.3. Լաբորատոր աշխատանքների ուսումնամեթոդական քարտ 14

12.4. Ինքնուրույն աշխատանքների ուսումնամեթոդական քարտ 15

13. Դասընթացի նյութատեխնիկական միջոցների ապահովում 17

14. Գնահատում 19

14.1. Գիտելիքների ստուգման և գնահատման բաղադրիչներ..... 19

14.2. Ուսանողների գիտելիքների ստուգում..... 19

14.3. Հարցաշար..... 20

ԴԱՍԸՆԹԱՑԻ ՀԱՄԱՌՈՏ ՆԿԱՐԱԳՐԻՉ 22

ԲԱՑԱՏՐԱԳԻՐ

1. Դասընթացի դերը և տեղը կրթական ծրագրում¹.

Դասընթացում դիտարկվում են էվոլյուցիոն տեսության տեղը և դերը ժամանակակից կենսաբանության մեջ, բնական և արհեստական ընտրությունները, դերը տեսակառաջացման գործում, պարզից դեպի բարդ անցնելու ընդհանուր կենսաբանական շղթայի վերաբերյալ, միաժամանակ նրանց միջև եղած պատճառական կապերը, օրգանական աշխարհի ծագման միասնության աստիճանական զարգացումը: Այն ներառված է Մասնագիտական դասընթացների բլոկում:

2. Դասընթացի նպատակը և խնդիրները.

2.1. Դասընթացի նպատակն է.

Էվոլյուցիոն տեսության դասընթացը նպատակ ունի ուսանողներին գաղափար տալու օրգանական աշխարհի ծագման միասնության աստիճանական զարգացման, օրգանիզմների կառուցվածքի և տեսակառաջացման մասին:

2.2. Դասընթացի խնդիրներն են.

1. Ուսանողներին զինել գիտելիքներով էվոլյուցիոն տեսության մասին:
2. Խորացնել և ընդլայնել ուսանողների գիտելիքները էվոլյուցիոն տեսության պատմության, զարգացման, կյանքի առաջացման և ծագման մասին:
3. Ուսանողներին գաղափար տալ էվոլյուցիոն տեսության հիմնական բաժինների մասին:
4. Ուսանողներին նախապատրաստել էվոլյուցիոն տեսության վրա հենված կենսաբանական գիտությունների հետագա ուսումնասիրություններին:

3. Դասընթացին մասնակցելու նախնական մուտքային գիտելիքները, կարողությունները և հմտությունները /դասընթացները/.

«Էվոլյուցիոն տեսություն» դասընթացին մասնակցելու կարևոր նախապայմանն է ուսանողների գիտելիքների և հմտությունների առկայությունը «Կենսաբանություն» մասնագիտության բակալավրի կրթական ծրագրում դասավանդվող «Բույսերի անատոմիա և ձևաբանություն», «Բույսերի կարգաբանություն», «Մանրէաբանություն», «Ողնաշարավորների կենդանաբանություն», «Անողնաշարավորների կենդանաբանություն», «Բույսերի էկոլոգիա», «Կենդանիների էկոլոգիա» դասընթացներից:

4. Դասընթացը ձևավորում է հետևյալ կրթական վերջնարդյունք(ներ)ը² և /կամ կոմպետենցիաները.

Վերջնական արդյունքին ներկայացվող պահանջները Գիտելիք

¹ Ներկայացվում է դասընթացի կարևորությունը տվյալ կրթական ծրագրի խնդիրների լուծման հարցում և տեղը ուսումնական պլանում ըստ կրթաբլոկների

² <http://www.vsu.am/karg/ararkayakan-nkaragir-17.pdf>

Լրացվում է «Առարկայի նկարագրի մշակման ռազմավարության» կոմպետենցիաների ցանկին համապատասխան:

- Էվոյուցիոն տեսության ուսումնասիրման մեթոդները,
- բնական և արհեստական ընտրության նմանություններն ու տարբերությունները,
- բնության մեջ տեղի ունեցող բուսական և կենդանական աշխարհի միջև փոխհարաբերությունները,
- կենդանի օրգանիզմների և արտաքին միջավայրի միջև փոխհարաբերությունները,
- գոյության պայքարը և նրա դերն Էվոյուցիոն պրոցեսում:
- Ճիշտ կողմնորոշվել բնության մեջ տեղի ունեցող երևույթների բազմազանության մեջ:

Կարողություն

- որոշ գիտական հարցերի վերաբերյալ կատարել ինքնուրույն եզրահանգումներ, -իրական գնահատական տալ այս կամ ուղղությամբ տարվող կենսաբանական ուսումնասիրություններին:

Հմտություն

- Էվոյուցիոն տեսության ուսումնասիրման մեթոդներին,
- Վերլուծական մտածելակերպին:

Դասընթացի ընթացքում կիրականանա նաև ծրագրի ավարտական պահանջներով նախատեսված հետևյալ կոմպետենցիաների զարգացումը`

1. Ընդհանրական կոմպետենցիաներ(Ը)

ա) Գործիքային կոմպետենցիաներ (այսուհետև` ԳԿ)

- վերլուծության և համադրության կարողություն (ԳԿ-1)
- որոշումներ կայացնելու և լուծելու կարողություն (ԳԿ-3)

բ).Միջանձնային կոմպետենցիաներ (ՄՁԿ)

- թիմային աշխատանքի կարողություն (*ՄՁԿ - 2*),

գ)Համակարգային կոմպետենցիաներ (ՀԳԿ)

- Գիտելիքները գործնականում կիրառելու կարողություն (ՀԳԿ-1)
- հետազոտական կարողություն (ՀԳԿ-2),
- ուսումնառության կարողություն (ՀԳԿ-3)
- ինքնուրույն աշխատելու կարողություն (ՀԳԿ-5)

2 .Առարկայական (մասնագիտական) կոմպետենցիաներ (այսուհետև` ԱԿ)

ա) մասնագիտական կոմպետենցիաներ.

- Կենսաբանության մասնագիտության բնագավառի առարկայական իմացություն, գիտելիքներին տիրապետելու կարողություն (ԱԿ-1)
- ծանոթ լինի ժամանակակից կենսաբանության և բնագիտության հիմնական սկզբունքներին և հայեցակարգերին, բնապահպանական գլոբալ և տարածքային հիմնախնդիրներին (ԱԿ-2)
- տիրապետի հիմնական կենսաբանական հասկացություններին, կենսաբանական օրենքներին և երևույթներին, մասնագիտական տերմինաբանական ապարատին(ԱԿ-4)
- ունակ լինի ճշգրիտ և պարզ կերպով ներկայացնելու կենսաբանական օրինաչափությունների հիմնական դրույթները և դրանց հիմնավորումները, հիմնախնդիրները և դրանց լուծումները, գրավոր և բանավոր(ԱԿ-6)

բ)մասնագիտական-գործնական (այսուհետ` ՄԳԿ)

- կենսաբանության հարցերի շրջանականերում ընդունելի որոշումների հասնելու նպատակով երկխոսություն, բանավեճեր վարելու կարողություն (ՄԳԿ-3)

գ) Ուսումնադաստախարակչական և մեթոդական գործունեության ոլորտում (այսուհետ ԱԿՈՒԳ)

- Կենսաբանության ուսումնական գործընթացների կազմակերպում, դիդակտիկ միջոցների կիրառում (ԱԿՈՒԳ-2)
- ուսուցման արդյունքների և ուսումնառողների ձեռքբերումները գնահատելու կարողություն (ԱԿՈՒԳ-5)
- խորհրդատվական աշխատանք կատարելու ունակություն (ԱԿՈՒԳ-6)

➤ մեթոդական գործունեության ոլորտում

- Կենսաբանության առարկայական ծրագրի թեմաների և բաժինների յուրահատկությունների հիման վրա ուսումնական պարապմունքների պլանավորման ունակություն (ԱԿՄԳ-2)
- սեփական գործունեությունը պլանավորելու, կազմակերպելու, վերլուծելու, ինչպես նաև այն անընդհատ կատարելագործելու ունակություն (ԱԿՄԳ-3)

5. Դասընթացի դերը կրթական ծրագրի շրջանավարտների գիտելիքների, կարողությունների և հմտությունների ձևավորման հարցում ըստ աշխատաշուկայի պահանջների³.

«Էվոլյուցիոն տեսություն» դասընթացից ձեռք բերված գիտելիքներն և հմտություններն ուսանողները կարող են հետագայում կիրառել «Բույսերի էկոլոգիա», «Բուսաբուծության հիմունքներ» «Գենետիկա սելեկցիայի հիմունքներով», «Բույսերի էկոլոգիա» դասընթացների յուրացման ժամանակ, իրականացնելու հետագոտական աշխատանքներ:

6. Դասընթացի ծավալը, ուսումնական աշխատանքի տեսակները, արդյունքների ամփոփման ձևերը

Չափանիշ	Առկա ուսուցման համակարգ	Հեռակա ուսուցման համակարգ
Դասընթացի ընդհանուր աշխատատարությունը (կրեդիտ /ընդհանուր ժամաքանակ)		4 կրեդիտ/120 ժամ

Աշխատանքի տեսակը	Ժամաքանակ	Ժամաքանակ
Դասախոսություն		10
Գործնական աշխատանք		6
Սեմինար պարապմունք		-
Լաբորատոր աշխատանք		4
Ինքնուրույն աշխատանք		100
Ընդամենը		120

³ Նշվում է, թե տվյալ դասընթացի յուրացման, ամփոփման արդյունքում ձեռքբերված գիտելիքները, հմտությունները և կարողությունները աշխատաշուկայի որ բնագավառներում և ոլորտներում կարող է շրջանավարտը կիրառել

Ստուգման ձևը (ստուգարք/ ընթացիկ քննություն/ հանրագումարային քննություն)		Քննություն
---	--	------------

7. Ուսումնական աշխատանքների տեսակները⁴ .

- **Դասախոսությունը** դասախոսի կողմից դասընթացի ծրագրի շրջանակներում գիտական-տեղեկատվական թեմայի վերաբերյալ տրամաբանորեն կառուցված, հետևողական ու պարզ խոսքի շարադրանքն է, որի նպատակն է ուսանողին տալ համապարփակ գիտելիքներ: Դասախոսը վերլուծում, մեկնաբանում է թեմայի առավել կարևոր, դժվար ընկալելի, հանգուցային հարցերը: Դասախոսությունը ուսանողի առջև ուրվագծվող գիտական մի ճանապարհ է, որը նա կարող է միայն անցնել գիտական գրականության ընթերցանության, ուսումնական բնույթի այլ պարապմունքների և ինքնուրույն կատարած աշխատանքների շնորհիվ: Դասախոսը պետք է խթանի ուսանողի ակտիվ իմացաբանական գործունեությունը, նպաստի նրանց ստեղծագործական մտածողության ձևավորմանը: Ուսանողը նույնպես պետք է լինի դասախոսության ակտիվ մասնակից: Ուսանողը դասախոսությանը ներկայանալուց առաջ պետք է ծանոթացած լինի տվյալ դասին ներկայացվող թեմային, որպեսզի կարողանա մասնակցել ուսումնական գործընթացին:
- **Գործնական աշխատանքները** նպաստում են տեսական նյութի առավել լավ յուրացմանը և ամրապնդմանը: Գործնական աշխատանքները նպատակ ունեն ամրապնդելու ուսումնասիրվող թեմաների տեսական դրույթները, հաղորդելու ինքնուրույն վերլուծության, տվյալների ամփոփման, էլեկտրոնային ծրագրերի հետ աշխատելու փորձ և հմտություններ: Գործնական աշխատանքի անցկացման համար ուսանողը պարտավոր է ուսումնասիրել թեմային վերաբերող տեսական նյութը (դասախոսություն, համապատասխան գրականություն) և փորձի, հետազոտության մեթոդոլոգիան:
- **Լաբորատոր աշխատանքները** նպաստում են տեսական նյութի առավել լավ յուրացմանը և ամրապնդմանը: Լաբորատոր աշխատանքները նպատակ ունեն ամրապնդելու ուսումնասիրվող թեմաների տեսական դրույթները, ուսանողներին ուսուցանելու փորձարարական հետազոտությունների մեթոդները, հաղորդելու ինքնուրույն վերլուծության, տվյալների ամփոփման, լաբորատոր սարքավորումների, համակարգիչների, սարքերի, էլեկտրոնային ծրագրերի հետ աշխատելու փորձ և հմտություններ: Լաբորատոր աշխատանքն անցկացման համար ուսանողը պարտավոր է ուսումնասիրել թեմային վերաբերող տեսական նյութը (դասախոսություն, համապատասխան գրականություն) և փորձի, հետազոտության մեթոդոլոգիան:
Դասախոսի հսկողությամբ ուսանողը իրականացնում է փորձը, հետազոտությունը, գրանցում է արդյունքները և կատարում (գրանցում) համապատասխան եզրակացություն

⁴ Թողել այն տեսակը, որը տվյալ դասընթացի դասավանդման համար նախատեսված է: Դասավանդողը կարող է նկարագրությունը փոխել կամ լրացումներ կատարել:

- **Ինքնուրույն աշխատանքը** ուսանողների ուսումնական, գիտահետազոտական աշխատանքն է, որն իրականացվում է դասախոսի առաջադրանքով և մեթոդական ղեկավարությամբ, բայց առանց նրա անմիջական ղեկավարության:

Ինքնուրույն աշխատանքի տեսակներն են⁵

- **Ռեֆերատ** – ուսանողների ինքնուրույն գրավոր, որտեղ ուսանողը շարադրում է որևէ հարցի կամ թեմայի էությունը՝ հենվելով գրական աղբյուրների վրա (դասագրքեր, ձեռնարկներ և այլն):
- **Կոնկրետ իրավիճակների վերլուծություն** – ուսանողների ակտիվ գործունեության կազմակերպման ամենաարդյունավետ և տարածված ձևերից մեկն է, որը զարգացնում է մասնագիտական և կեցությանը վերաբերող տարբեր հարցերի վերլուծության կարողությունը:
- **Չեկույց** – որևէ գիտական կամ հետազոտական թեմայի շուրջ կատարած եզրակացությունների, ստացած արդյունքների ներկայացում ուսանողի կողմից:

8. Դասավանդման մեթոդներն են⁶ հիմնահարցային դասախոսություն, դասախոսություն-երկխոսություն, դասախոսություն-քննարկում, *թեմատիկ սեմինար*, սեմինար-բանավեճ, գործնական աշխատանք՝ անհատական աշխատանք, գործնական աշխատանք՝ խմբային աշխատանք, ուսուցում գործողությամբ (action learning), իրավիճակային խնդիրների վերլուծություն,

9. Ուսումնառության մեթոդներն են⁷՝ մտքերի քարտեզագրում, թիմային քննարկում, իրադրությունների վերլուծություն, ալգորիթմների և հրահանգների կազմում, աղյուսակների և դասակարգման համեմատման և համակարգման սխեմաների կազմում, փորձի/հետազոտության արդյունքների վերաբերյալ եզրակացության ներկայացում....

⁵ Թողել այն տեսակը, որը տվյալ դասընթացի դասավանդման համար նախատեսված է: Դասավանդողը կարող է նկարագրությունը փոխել կամ լրացումներ կատարել:

⁶ Ներկայացված են օրինակներ: Դասավանդողը կարող է նկարագրությունը փոխել կամ լրացումներ կատարել:

⁷ Ներկայացված են օրինակներ: Դասավանդողը կարող է նկարագրությունը փոխել կամ լրացումներ կատարել:

10. Դասընթացի համառոտ բովանդակությունը, ուսումնական աշխատանքի ծավալը՝ ըստ բաժինների և թեմաների⁸.

h/h	Թեմա (բաժին)	Ուսումնական աշխատանքի ժամաքանակն ըստ տեսակների				
		դասախոսություն	սեմինար պարամունք	գործնական աշխատանք	լաբորատոր աշխատանք	Ինքնուրույն աշխատանք
1.	Ներածություն: Կյանքի ծագման ժամանակակից տեսությունները: Նախադարվիյան շրջանի կենսաբանության ընդհանուր բնութագիրը. օրգանական աշխարհի ծագման մետաֆիզիկական աշխարհայացքի առաջացումը: Ժ. Բ. Լամարկի ուսմունքը օրգանական աշխարհի էվոլյուցիայի մասին:	2			2	20
2.	Դարվինի էվոլյուցիոն ուսմունքի առաջացման հիմնական նախադրյալները: Չ. Դարվինի ուսմունքի նշանակությունը կենսաբանության զարգացման համար: Դարվինի ուսմունքի հիմնական դրույթները: Տեսակ, բնորոշումը և չափանիշները: Հասկացություն պոպուլյացիաների մասին. Պոպուլյացիան որպես տեսակի կառուցվածքային և էվոլյուցիոն միավոր:	2		2		20
3.	Ժառանգականություն և փոփոխականություն, դերն էվոլյուցիայում: Արհեստական ընտրություն, ընտանի կենդանիների ցեղերի, մշակաբույսերի սորտերի ստացումը: Գոյության կրիվ և նրա ձևերը: Բնական ընտրություն և նրա ձևերը: էվոլյուցիայի այլ գործոններ:	2		2		20
4.	Օրգանիզմների հարմարվածությունը, ձևերը, հարմարվածության հարաբերական բնույթը: Միկրոէվոլյուցիա. Տեսակառաջացում, հասկացություն ալոպատրիկ և սիմպատրիկ տեսակառաջացման մասին: Մակրոէվոլյուցիա: Մակրոէվոլյուցիայի ապացույցները: Հասկացություն էվոլյուցիայի ձևերի մասին: էվոլյուցիայի հիմնական ուղղությունները և ուղիները: Կենսաբանական առաջադիմություն և հետադիմություն:	2			2	20
5.	Օրգանական աշխարհի զարգացումը : Մարդու ծագումը: Մարդու ծագման հիմնական վարկածները: Մարդու ծագման փուլերը:	2		2		20

⁸ Նման է օրացուցային պլանին

ԸՆԴԱՄԵՆԸ	10		6	4	100
----------	----	--	---	---	-----

11. Ուսումնամեթոդական գրականության ապահովման քարտ

h/h	Անվանումը/հեղինակ	Հրատարակության տարի
Հիմնական գրականություն (ՀԳ)		
1.	Բեգլարյան Ն.- Էվոլյուցիոն տեսություն /ուսումնական ձեռնարկ/,	1998
2.	Константинов А. В. “Основы эволюционной теории”, Минск, высшая школа, 2 – е изд.	1989
3.	Яблонов А. В., Юсуфов А. Г. “Эволюционное учение”, М.,.	1991
4.	Армен Л. Тахтаджян - Грани эволюции - 328 стр.	2007
5.	Александр Белов - Тайна происхождения человека раскрыта! Теория эволюции и инволюции -	2009
6.	Эволюционная биология. История и теория. Выпуск 3 -	2005
7.	Л. Е. Гринин, А. В. Марков, А. В. Кортаев - Макроэволюция в живой природе и обществе - 248 стр.	2009
Լրացուցիչ գրականություն(ԼԳ)		
1.	Хайтун С. Д. - Феномен человека на фоне универсальной эволюции -	2009
2.	Валерий Зосим - Эволюция предков человека -	2008
3.	Э. М. Галимов - Феномен жизни. Между равновесием и нелинейностью. Происхождение и принципы эволюции	2009
4.	Эволюция человека в шестую расу?	2006
5.	Մեթոդական ձեռնարկներ, երաշխավորագրեր, այլ	
Համացանցային տեղեկատվական պաշարներ (ՀՏՊ)/ Էլեկտրոնային աղբյուրներ (ԷԱ)		
1.		
2.		
3.		

12. Դասընթացի ուսումնամեթոդական քարտ

12.1. Դասախոսությունների ուսումնամեթոդական քարտ

h/h	Թեմա	Ուսումնասիրվող հարցեր	Ժամաքանակ	Գրականություն ⁹
1.	Ներածություն: Կյանքի ծագման ժամանակակից տեսությունները: Նախադարվիկյան շրջանի կենսաբանության ընդհանուր բնութագիրը. օրգանական աշխարհի ծագման մետաֆիզիկական աշխարհայացքի առաջացումը: Ժ.Բ.Լամարկի ուսմունքը օրգանական աշխարհի էվոլյուցիայի մասին:	Էվոլյուցիոն ուսմունքը որպես կենսաբանական դասընթաց, ուսումնասիրման առարկան, խնդիրները: Կյանքի ծագման տեսությունները. կրեացիոնիզմ, կյանքի կայուն ծագման վարկած, Պանսպերմիայի վարկած, կյանքի ինքնածնության վարկած, կյանքի աբիոգեն ծագման վարկած: Հասկացողություն մետաֆիզիկական աշխարհայացքի մասին, Կ.Լիննեյի ուսմունքը, Կ.Լիննեյի տված արհեստական դասակարգումը: Ժ.Բ.Լամարկի ուսմունքը օրգանական աշխարհի ծագման մասին, հասկացողություն գրադացիայի մասին:	2	ՀԳ 1-7 ԼԳ-1-4
2.	Դարվինի էվոլյուցիոն ուսմունքի առաջացման հիմնական նախադրյալները: Չ.Դարվինի ուսմունքի նշանակությունը կենսաբանության զարգացման համար: Դարվինի ուսմունքի հիմնական դրոյթները: Տեսակ, բնորոշումը և չափանիշները: Հասկացություն պոպուլյացիաների մասին. Պոպուլյացիան որպես տեսակի կառուցվածքային և էվոլյուցիոն միավոր:	Չ.Դարվինի ուսմունքի առաջացման գիտական, հասարակական-քաղաքական, սոցիալ-տնտեսական նախադրյալները: Էվոլյուցիոն ուսմունքի նշանակությունը կենսաբանության զարգացման համար: Չ.Դարվինի ուսմունքի հիմնական դրոյթները օրգանական բնության ծագման մասին: Հասկացողություն տեսակի չափանիշների մասին՝ ձևաբանական, կենսաքիմիական, ֆիզիոլոգիական, գենետիկական, էկոլոգիական, աշխարհագրական չափանիշներ: Պոպուլյացիան որպես տեսակի կառուցվածքային և էվոլյուցիոն միավոր: Հասկացողություն պոպուլյացիայի խտության մասին:	2	ՀԳ 1-7 ԼԳ-1-4

⁹ Ըստ 12-րդ կետում նշված ցանկի, օր.՝ ՀԳ 1, ԼԳ 2 և այլն

3.	<p>Ժառանգականություն և փոփոխականություն, դերն Էվոյուցիայում: Արհեստական ընտրություն, ընտանի կենդանիների ցեղերի, մշակաբույսերի սորտերի ստացումը:</p> <p>Գոյության կոիվ և նրա ձևերը: Բնական ընտրություն և նրա ձևերը: Էվոյուցիայի այլ գործոններ:</p>	<p>Հասկացողություն ժառանգականության և փոփոխականության մասին: Հասկացողություն ոչ ժառանգական փոփոխականության մասին: Ցեղերի և սորտերի բազմազանությունը: Նոր ցեղերի և սորտերի ստացումը:</p> <p>Հասկացողություն գոյության կոիվ մասին: Գոյության կոիվ ձևերը ներտեսակային, միջտեսակային, կոիվ անօրգանական բնության անբարենպաստ պայմաններ դեմ: Հասկացողություն բնական ընտրության մասին: Էվոյուցիայի այլ գործոններ:</p>	2	<p>ՀԳ 1-7 ԼԳ-1-4</p>
4.	<p>Օրգանիզմների հարմարվածությունը, ձևերը, հարմարվածության հարաբերական բնույթը: Միկրոէվոյուցիա. Տեսակառաջացում, հասկացողություն ալոպատրիկ և սիմպատրիկ տեսակառաջացման մասին:</p> <p>Մակրոէվոյուցիա: Մակրոէվոյուցիայի ապացույցները: Հասկացողություն Էվոյուցիայի ձևերի մասին: Էվոյուցիայի հիմնական ուղղությունները և ուղիները: Կենսաբանական առաջադիմություն և հետադիմություն:</p>	<p>Հասկացողություն օրգանիզմների հարմարվածության մասին: Հարմարվածության բազմազանությունը: Օրգանիզմների հարմարվածության առաջացումը: Հասկացողություն միկրոէվոյուցիայի մասին: Դարվիներ տեսակառաջացման մասին: Տեսակառաջացման եղանակները աշխարհագրական, էկոլոգիական:</p> <p>Հասկացողություն մակրոէվոյուցիայի մասին: Էվոյուցիայի գլխավոր ուղիները արոմորֆոզ, իդիոադապտացիա, դեգեներացիա: Հասկացողություն կենսաբանական առաջադիմության և հետադիմության մասին:</p>	2	<p>ՀԳ 1-7 ԼԳ-1-4</p>
5.	<p>Օրգանական աշխարհի զարգացումը: Մարդու ծագումը: Մարդու ծագման հիմնական վարկածները: Մարդու ծագման փուլերը:</p>	<p>Էվոյուցիոն ապացույցներ: Հոմոլոգ և անալոգ օրգաններ: Հասկացողություն ռուդիմենտների և ատավիզմների մասին: Հասկացողություն անցումային ձևերի մասին: Օրգանական աշխարհի զարգացումը տարբեր դարաշրջաններում:</p> <p>Մարդու ծագման մասին պատկերացումների զարգացումը: Մարդու ծագման վերաբերյալ վարկածները: Մարդու ծագման փուլերը:</p>	2	<p>ՀԳ 1-7 ԼԳ-1-4</p>

12.2. Գործնական աշխատանքների /սեմինար պարապմունքների ուսումնամեթոդական քարտ

Խ/Խ	Թեմա	Ուսումնասիրվող հարցեր	Ժամաքանակ	Մտուզման ձևը	Գրականություն ¹⁰
1.	Կ.Լիննեյի և Ժ.Բ.Լամարկի աշխատանքները օրգանական բնության ծագման մասին: Դարվինի ուսմունքի հիմնական դրույթները:	Կ.Լիննեյի տված արհեստական դասակարգումը: Ժ.Բ.Լամարկի ուսմունքը օրգանական աշխարհի ծագման մասին, հասկացողություն գրադացիայի մասին: Չ.Դարվինի ուսմունքի հիմնական դրույթները օրգանական բնության ծագման մասին:	2	գնահատվում է գործնական աշխատանքի կատարման կարողությունները և տնային աշխատանքների կատարման արդյունքները	ՀԳ 1-7 ԼԳ-1-4
2.	Ժառանգականություն և փոփոխականություն: Գոյության կռիվ և նրա ձևերը:	Հասկացողություն ժառանգականության և փոփոխականության մասին: Հասկացողություն ոչ ժառանգական փոփոխականության մասին: Հասկացողություն գոյության կռվի մասին: Գոյության կռվի ձևերը՝ ներտեսակային, միջտեսակային, կռիվ անօրգանական բնության անբարենպաստ պայմաններ դեմ:	2	գնահատվում է գործնական աշխատանքի կատարման կարողությունները և տնային աշխատանքների կատարման արդյունքները	ՀԳ 1-7 ԼԳ-1-4
3	Բնական ընտրություն և նրա ձևերը: Ալոպատրիկ և սիմպատրիկ տեսակառաջացման մասին: Մարդու ծագումը: Մարդու ծագման հիմնական վարկածները: Մարդու ծագման փուլերը:	Հասկացողություն բնական ընտրության մասին: Էվոլյուցիայի այլ գործոններ: Հասկացողություն ալոպատրիկ և սիմպատրիկ տեսակառաջացման մասին: Մարդու ծագման վերաբերյալ վարկածները: Մարդու ծագման փուլերը:	2	գնահատվում է գործնական աշխատանքի կատարման կարողությունները և տնային աշխատանքների	ՀԳ 1-7 ԼԳ-1-4

¹⁰ Ըստ 12-րդ կետում նշված ցանկի, օր.՝ ՀԳ 1, ԼԳ 2 և այլն

			կատարման արդյունքները	
--	--	--	-----------------------	--

12.3. Լաբորատոր աշխատանքների ուսումնամեթոդական քարտ

h/h	Թեմա	Ուսումնասիրվող հարցեր	Ժամաքանակ	Ստուգման ձևը	Գրականություն ¹¹
1.	Կյանքի ծագման ժամանակակից տեսությունները: Պոպուլյացիան որպես տեսակի կառուցվածքային և էվոլյուցիոն միավոր: Մակրոէվոլյուցիայի սաղմնաբանական ապացույցները	Կյանքի ծագման տեսությունները. կրեացիոնիզմ, կյանքի կայուն ծագման վարկած, Պանսպերմիայի վարկած, կյանքի ինքնածնության վարկած, կյանքի աբիոգեն ծագման վարկած: Պոպուլյացիան որպես տեսակի կառուցվածքային և էվոլյուցիոն միավոր: Հասկացողություն պոպուլյացիայի խտության մասին: Հասկացողություն մակրոէվոլյուցիայի մասին: Սաղմնաբանական ապացույցները:	2	գնահատվում է լաբորատոր աշխատանքի կատարման կարողությունները և հմտությունները, աշխատանքի հիմնավոր գրավոր վերլուծությունը	ՀԳ 1-7 ԼԳ-1-4
2.	Մակրոէվոլյուցիայի հնէաբանական ապացույցները: Մակրոէվոլյուցիայի ձևաբանական ապացույցները: Կենդանի օրգանիզմների հարմարվածության ձևերը	Հասկացողություն անալոգ և հոմոլոգ օրգանների, ռուդիմենտների, ատավիզմների մասին: Ժամանակակից անցումային ձևեր, կառուցվածքային առանձնահատկությունները: Գոյատևման պայմաններին	2	գնահատվում է լաբորատոր աշխատանքի կատարման կարողությունները և հմտությունները, աշխատանքի հիմնավոր գրավոր վերլուծությունը	ՀԳ 1-7 ԼԳ-1-4

¹¹ Ըստ 12-րդ կետում նշված ցանկի, օր.՝ ՀԳ 1, ԼԳ 2 և այլն

		հարմարվածության ձևերը և դրանց ծագումը:			
--	--	--	--	--	--

12.4. Ինքնուրույն աշխատանքների ուսումնամեթոդական քարտ

h/h	Ինքնուրույն աշխատանքի թեմաները	Ուսումնասիրվող հարցեր	Աշխատանքի տեսակը ¹²	Ներկայացման ժամկետները	Մտուզման ձևը	Գրականություն ¹³
Յուրաքանչյուր ուսանող ընտրում է մեկ թեմա						
1.	Կ. Լիննեյի կենդանի օրգանզիմների դասակարգման համակարգը	Բույսերի և կենդանիների դասակարգման արհեստական համակարգը, կրկնակի լատիններեն անվանակարգումն ըստ Կ. Լիննեյի	Ձեկույց՝ կոնկրետ իրավիճակի վերլուծությամբ	Մայիսի 2	Չափանիշները ներկայացվում են ստորև	Ուսանողը կարող է օգտվել ներկայացված բոլոր գրական աղբյուրներից
2.	Ժ. Բ. Լամարկի ուսմունքը օրգանական բնության գրադիացիայի մասին:	Ժ. Բ. Լամարկի ուսմունքը օրգանական բնության ծագման մասին, գրադիացիայի շարժիչ ուժերը:	Ձեկույց՝ կոնկրետ իրավիճակի վերլուծությամբ	Մայիսի 2	Չափանիշները ներկայացվում են ստորև	Ուսանողը կարող է օգտվել ներկայացված բոլոր գրական աղբյուրներից
3.	Չ. Դարվինի կյանքը և գիտական գործունեությունը:	Չ. Դարվինի կյանքը, ճանապարհորդությունը Բիզլ նավով:	Ձեկույց՝ կոնկրետ իրավիճակի վերլուծությամբ	Մայիսի 2	Չափանիշները ներկայացվում են ստորև	Ուսանողը կարող է օգտվել ներկայացված բոլոր գրական աղբյուրներից

¹² Տես 7-րդ կետի հինգերորդ պարբերությունը

¹³ Ըստ 12-րդ կետում նշված ցանկի, օր. չԳ 1, ԼԳ 2 և այլն

4.	Գոյության կռվի ձևերը	Ներտեսակային, միջտեսակային գոյության կռվի ձևերը, պայքար անօրգանական բնության անբարենպաստ պայմանների դեմ	Ձեկույց՝ կոնկրետ իրավիճակի վերլուծությամբ	Մայիսի 2	Չափանիշները ներկայացվում են ստորև	Ուսանողը կարող է օգտվել ներկայացված բոլոր գրական աղբյուրներից
5.	Բնական ընտրության ձևերը	Հասկացողություն շարժական, կայունացնող, սեռական և դիզուսպոլիվ ընտրության ձևերի մասին:	Ձեկույց՝ կոնկրետ իրավիճակի վերլուծությամբ	Մայիսի 2	Չափանիշները ներկայացվում են ստորև	Ուսանողը կարող է օգտվել ներկայացված բոլոր գրական աղբյուրներից
6	Էվոլյուցիայի այլ գործոններ՝ մեկուսացում, պոպուլյացիոն ալիքներ	Մեկուսացման ձևերը՝ աշխարհագրական, կենսաբանական, էկոլոգիական, գենետիկական մեկուսացում: Էվոլյուցիոն ալիքների դերը Էվոլյուցիոն գործընթացում:	Ձեկույց՝ կոնկրետ իրավիճակի վերլուծությամբ	Մայիսի 2	Չափանիշները ներկայացվում են ստորև	Ուսանողը կարող է օգտվել ներկայացված բոլոր գրական աղբյուրներից
7	Մակրոէվոլյուցիայի համեմատական-անատոմիական ապացույցներ	Հոմոլոգ-անալոգ օրգաններ: Հասկացողություն ռուդիմենտների և ստավիզմների մասին:	Ձեկույց՝ կոնկրետ իրավիճակի վերլուծությամբ	Մայիսի 2	Չափանիշները ներկայացվում են ստորև	Ուսանողը կարող է օգտվել ներկայացված բոլոր գրական աղբյուրներից
8	Մակրոէվոլյուցիայի կենսաաշխարհագրական ապացույցներ	Հակացողություն մակրոէվոլյուցիայի կենսաաշխարհագրական ապացույցների մասին:	Ձեկույց՝ կոնկրետ իրավիճակի վերլուծությամբ	Մայիսի 2	Չափանիշները ներկայացվում են ստորև	Ուսանողը կարող է օգտվել ներկայացված բոլոր գրական աղբյուրներից
9	Մակրոէվոլյուցիայի սաղմնաբանական ապացույցները	Հասկացողություն Հեկկել-Մյուլլերի կենսագենետիկ օրենքի մասին . Օնտոգենեզը որպես ֆիլոգենեզի համառոտ կրկնություն	Ձեկույց՝ կոնկրետ իրավիճակի վերլուծությամբ	Մայիսի 2	Չափանիշները ներկայացվում են ստորև	Ուսանողը կարող է օգտվել ներկայացված բոլոր գրական աղբյուրներից
10	Հարմարվածության ձևերի առաջացումը բույսերի մոտ	Բույսերի կարգաբանական տարբեր խմբերում հարմարանքների առաջացումը, հարմարանքների ձևերը	Ձեկույց՝ կոնկրետ իրավիճակի վերլուծությամբ	Մայիսի 2	Չափանիշները ներկայացվում են ստորև	Ուսանողը կարող է օգտվել ներկայացված բոլոր գրական աղբյուրներից

11.	Հարմարվածության ձևերի առաջացումը կենդանիների մոտ	Կենդանիների կարգաբանական տարբեր խմբերում հարմարանքների առաջացումը, հարմարանքների ձևերը	Ջեկույց՝ կոնկրետ իրավիճակի վերլուծությամբ	Մայիսի 2	Չափանիշները ներկայացվում են ստորև	Ուսանողը կարող է օգտվել ներկայացված բոլոր գրական աղբյուրներից
-----	--	--	---	----------	-----------------------------------	---

Ինքնուրույն աշխատանքը գնահատվում է առավերագույնը 20 միավոր: Գնահատման չափանիշներն են.

1. Հարցը ներկայացված է ավարտուն
2. Կարողանում է տերմինները բացատրել
3. Խոսքը հստակ է, մատչելի
4. Պատրաստված է ցուցադրություն
5. Կիրառվել են տարբեր գրական աղբյուրներ և առկա են հղումները /0; 1-2; 3 և ավելի/
6. Պատասխանել է հարցերի /0; 1-2; 3 և ավելի/
7. Ջեկուցումը գիտական է
8. Կատարվել է համեմատական վերլուծություն
9. Ներկայացնում է կիրառական օրինակներ
10. Քննարկվող գործընթացները ներկայացվել են բույսի օրգանիզմի ամբողջականության համատեքստում

Յուրաքանչյուր չափանիշի համար սահմանված առավելագույն միավորը՝ 2 , չափանիշի պահանջը թերի կատարելու դեպքում՝ 1 միավոր, չկատարելու դեպքում՝ 0 միավոր: Գումարային գնահատականը կլինի ինքնուրույն աշխատանքի գնահատականը:

13. Դասընթացի նյութատեխնիկական միջոցների ապահովում¹⁴

Ռեսուրսի անվանումը	Ռեսուրսի անվանումը, քանակը, նկարագրությունը (անհրաժեշտության դեպքում)
Լսարան (հատուկ կահավորմամբ)	Լսարան կահավորված համակարգչով, պրոյեկտորով և էկրանով
Նյութեր լաբորատոր աշխատանքների համար	Լաբորատոր աշխատանքների մեթոդական ցուցումներում ներառված նյութերը և սարքավորումները

¹⁴ Նշվում են սարք-սարքավորումների, համակարգչային ծրագրերի նկարագրությունները և քանակը, որոնք անհրաժեշտ են տվյալ դասընթացի ուսումնական գործընթացը կազմակերպելու համար

Սարքեր, սարքավորումներ	Լաբորատոր աշխատանքների մեթոդական ցուցումներում ներառված սարքավորումները,
Համակարգչային ծրագրեր	
Այլ	

14. Գնահատում

Համալսարանում գործում է բակալավրիատի, մագիստրատուրայի և ասպիրանտուրայի ուսանողների գիտելիքների պարբերական ստուգման և գնահատման բազմագործոնային համակարգ, որի կիրառման հիմնական նպատակներն են՝

- կազմակերպել ուսումնառության համաչափ աշխատանքային գործընթաց, ապահովել գիտելիքների համակողմանի ստուգում, խթանել ուսանողի ինքնուրույն աշխատանքը,
- իրականացնել ինքնուրույն առաջադրանքների, ընթացիկ ստուգումների (ստուգարքներ և քննություններ), ուսումնական գործընթացի այլ բաղադրիչների հաշվառում հետադարձ կապի արդյունավետ մեխանիզմների ներմուծման միջոցով՝ ի նպաստ ուսումնառության գործընթացի բարելավման:

Համալսարանում գնահատման գործընթացը կանոնակարգվում է համաձայն գործող կարգի¹⁵:

14.1. Գիտելիքների ստուգման և գնահատման բաղադրիչներն են՝

- Գործնական, սեմինար և լաբորատոր աշխատանքների ընթացքում ուսանողի ակտիվության և հմտությունների հաշվառում և գնահատում ընթացիկ ստուգումների միջոցով՝ առավելագույնը 40 միավոր:
- ինքնուրույն աշխատանքների (անհատական առաջադրանքներ) հաշվառում և գնահատում առավելագույնը գումարային 20 միավոր,
- դասընթացի ենթաբաժինների և ծրագրով նախատեսված այլ առաջադրանքների կատարման և յուրացման ընթացիկ ստուգում և գնահատում կիսամյակի ընթացքում (առկա ուսուցման համակարգում՝ ընթացիկ քննություններ կամ ստուգարքներ առավելագույնը գումարային 40 միավոր, հեռակա ուսուցման համակարգում՝ քննություն և ստուգարք՝ առավելագույնը՝ 40 միավոր):
- ստուգման արդյունքների ամփոփում գնահատման նշված բաղադրիչների արդյունքների հիման վրա և դասընթացի արդյունարար գնահատականի ձևավորում՝ առավելագույնը գումարային 100 միավոր:

14.2. Ուսանողների գիտելիքների ստուգում.

Դասընթացն ամփոփվում է քննությամբ/ստուգարքով/:

Քննությամբ ամփոփվող դասընթացն ավարտվում է կիսամյակի քննության միջոցով և մյուս բաղադրիչների գնահատումների արդյունքներով:¹⁶

¹⁵«Վանաձորի Հ. Թումանյանի անվան պետական համալսարան» հիմնադրամի ուսանողների գիտելիքների ստուգման, գնահատման և հաշվառման կանոնակարգ» (ընդունված ՎՊՀ-ի գիտական խորհրդի կողմից 30.062022թ.),

¹⁶ Կիրառվում է կամ առաջին, կամ երկրորդ պարբերությունն ըստ դասընթացի ամփոփման ձևի:

14.3. Հարցաշար (ըստ ծրագրի)

1. Էվոյուցիոն տեսության առարկան և նրա կապը մյուս գիտությունների հետ:
2. Կենսաբանության զարգացման նկարագրական շրջանը: Մետաֆիզիկական աշխարհայացք:
3. Լամարկի ուսմունքը օրգանական աշխարհի էվոյուցիայի մասին:
4. Էվոյուցիոն գաղափարներ Կ.Լիննեյի բույսերի և կենդանիների արհեստական դասակարգումը: Տեսակների կրկնակի անվանման նշանակությունը:
5. Դարվինի ուսմունքի առաջացման նախադրյալները:
6. Դարվինի ուսմունքը և նրա նշանակությունը:
7. Դարվինի ուսմունքի հիմնական դրույթները:
8. Տեսակ և նրա չափանիշները:
9. Պոպուլյացիան որպես տեսակի տարրական կառուցվածք:
10. Հասկացողություն պոպուլյացիաները միմյանց խառնվելու խոչընդոտող արգելքների մասին:
11. Պոպուլյացիաների թվակազմի կարգավորումը:
12. Ժառանգականություն և փոփոխականություն: Դերը էվոյուցիայում:
13. Ոչ ժառանգական և ժառանգական փոփոխականություն:
14. Արհեստական ընտրություն: Ցեղերի և սորտերի էվոյուցիայի գործոնները:
15. Գոյության կռիվ և նրա ձևերը: Ներտեսակային պայքար:
16. Միջտեսակային գոյության պայքարը բուսական և կենդանական աշխարհում:
17. Ներտեսակային և միջտեսակային գոյության կռիվ:
18. Օրգանիզմների միջև եղած բարդ փոխհարաբերությունների օգտագործումը մարդու կողմից:
19. Բնական ընտրություն և նրա ձևերը: Կայունացնող և շարժական ընտրություն:
20. Դիզոնպոսիվ և սեռական ընտրություն, դերն էվոյուցիայի ընթացքում:
21. Արհեստական և բնական ընտրության ներգործության համեմատությունը:
22. Էվոյուցիայի այլ գործոնները: Հասկացողություն մեկուսացման և նրա ձևերի մասին:
23. Էվոյուցիայի այլ գործոններ. Պոպուլյացիոն ալիքները և դրանց դերն էվոյուցիայում:
24. Հասկացողություն գեների դրեյֆի մասին:
25. Օրգանիզմների հարմարվածության առաջացումը:
26. Օրգանիզմների հարմարվածության ձևերը՝ հովանավորող և նախազգուշացնող գունավորում:
27. Օրգանիզմների հարմարվածության ձևերը՝ դիմակավորում և միմիկրիա, առաջացումը և դերն էվոյուցիայում:
28. Օրգանիզմների հարմարվածության հարաբերականությունը:
29. Նոր տեսակների առաջացումը: Միկրոէվոյուցիա:
30. Ալոպատրիկ և սիմպատրիկ տեսակառաջացում:
31. Բույսերի և կենդանիների ժամանակակից համակարգը որպես էվոյուցիայի արտացոլում: Մակրոէվոյուցիա:
32. Միկրո- և մակրո-էվոյուցիայի գործընթացների համեմատությունը:
33. Մակրոէվոյուցիայի հնէաբանական և ձևաբանական ապացույցները:
34. Անալոգ և հոմոլոգ օրգաններ. Օրինակներ բուսական և կենդանական աշխարհից:
35. Ռոդիմենտներ և ատավիզմներ. Օրինակներ բուսական և կենդանական աշխարհից:
36. Հասկացողություն օրգանիզմների ֆիլոգենետիկ շարքերի մասին:
37. Հասկացողություն բրածո անցումային ձևերի մասին. Օրինակներ բուսական և կենդանական աշխարհից:
38. Մակրոէվոյուցիայի սաղմնաբանական ապացույցներ:
39. Հեկկել-Մյուլլերի կենսագենետիկ օրենքի էությունը:
40. Մակրոէվոյուցիայի կենսաաշխարհագրական ապացույցները:
41. Էվոյուցիայի գլխավոր ուղիները:
42. Էվոյուցիայի ձևերը. Դիվերգենցիա, կոնվերգենցիա, զուգահեռայնություն:
43. Տարամիտման դերն էվոյուցիայում:
44. Արոմորֆոզներ. Օրինակներ բուսական աշխարհից:
45. Արոմորֆոզներ. Օրինակներ կենդանական աշխարհից:
46. Իդիոադապտացիաներ, առաջացումը. Օրինակներ բուսական աշխարհից:
47. Իդիոադապտացիաներ. Օրինակներ կենդանական աշխարհից:
48. Ընդհանուր դեգեներացիաներ. Օրինակներ: Դերն էվոյուցիայում:

49. Առաջադիմությունն ու հետադիմությունը օրգանական աշխարհում:
50. Մարդու ծագման մասին պատկերացումների զարգացումը:
51. Մարդու և մարդանման կապիկների նմանությունն ու տարբերությունը:
52. Մարդու կենդանական ծագման ապացույցները:
53. Մարդու էվոլյուցիայի՝ անթրոպոգենեզի կենսաբանական գործոնները:
54. Անթրոպոգենեզի սոցիալական գործոնները:
55. Մարդու և մարդանման կապիկների ընդհանուր նախնիները:
56. Մարդացման փուլերը. Հնագույն և հմուտ մարդիկ:
57. Մարդացման փուլերը. Հնադարյան մարդիկ , առաջին ժամանակակից մարդիկ:
58. Մարդկային ռասաները:
59. Ռասիզմի քննադատությունը:
60. Տեսակների բնաջնջման պատճառները:

«ՎԱՆԱԶՈՐԻ Հ. ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ»
ՀԻՄՆԱԴՐԱՄ

ԴԱՍԸՆԹԱՑԻ ՀԱՄԱՌՈՏ ՆԿԱՐԱԳՐԻՉ

Մասնագիտություն`	<u>011401.00.6 Մասնագիտական մանկավարժություն</u> <i>/դասիչ, մասնագիտության լրիվ անվանումը/</i>
Կրթական ծրագիր`	<u>011401.01.6 Կենսաբանություն</u> <i>/դասիչ, կրթական ծրագրի լրիվ անվանումը/</i>
Որակավորման աստիճան`	<u>Մանկավարժության բակալավր</u> <i>/բակալավր, մագիստրատուրա/</i>

Վանաձոր 2025

Հեռակա ուսուցման համակարգ

Դասընթացի թվանիշը, անվանումը	Էվոյուցիոն տեսություն			
Դասընթացին հատկացվող կրեդիտը	4			
Ուսումնառության տարի / կիսամյակ	5-րդ կուրս , երկրորդ կիսամյակ			
Ժամերի բաշխումը	Լսարանային	20	Դասախոսություն	10
			Գործնական	6
			Լաբորատոր աշխատանք	4
	Ինքնուրույն	100		
	Ընդամենը	120		
Ստուգման ձևը	Քննություն			
Դասընթացի նպատակը	Դասընթացի նպատակն է			
Դասընթացի վերջնարդյունքները	<p>Վերջնական արդյունքին ներկայացվող պահանջները</p> <p>Գիտելիք</p> <ul style="list-style-type: none"> - էվոյուցիոն տեսության ուսումնասիրման մեթոդները, - բնական և արհեստական ընտրության նմանություններն ու տարբերությունները, - բնության մեջ տեղի ունեցող բուսական և կենդանական աշխարհի միջև փոխհարաբերությունները, - կենդանի օրգանիզմների և արտաքին միջավայրի միջև փոխհարաբերությունները, - գոյության պայքարը և նրա դերն էվոյուցիոն պրոցեսում: - Ճիշտ կողմնորոշվել բնության մեջ տեղի ունեցող երևույթների բազմազանության մեջ: <p>Կարողություն</p> <ul style="list-style-type: none"> - որոշ գիտական հարցերի վերաբերյալ կատարել ինքնուրույն եզրահանգումներ, <p>-իրական գնահատական տալ այս կամ ուղղությամբ տարվող կենսաբանական ուսումնասիրություններին:</p> <p>Հմտություն</p> <ul style="list-style-type: none"> - էվոյուցիոն տեսության ուսումնասիրման մեթոդներին, -Վերլուծական մտածելակերպին: 			
Դասընթացի բովանդակությունը	<p>Թեմա 1. Ներածություն: Կյանքի ծագման ժամանակակից տեսությունները:Նախադարվիյան շրջանի կենսաբանության ընդհանուր բնութագիրը. օրգանական աշխարհի ծագման մետաֆիզիկական աշխարհայացքի առաջացումը: Ժ.Բ.Լամարկի ուսմունքը օրգանական աշխարհի էվոյուցիայի մասին:</p> <p>Թեմա2. Դարվինի էվոյուցիոն ուսմունքի առաջացման հիմնական նախադրյալները: 2.Դարվինի ուսմունքի նշանակությունը կենսաբանության զարգացման համար: Դարվինի ուսմունքի հիմնական դրույթները: Տեսակ, բնորոշումը և չափանիշները: Հասկացություն պոպուլյացիաների մասին.</p>			

	<p>Պոպուլյացիան որպես տեսակի կառուցվածքային և էվոլյուցիոն միավոր:</p> <p>Թեմա 3. Ժառանգականություն և փոփոխականություն, դերն էվոլյուցիայում: Արհեստական ընտրություն, ընտանի կենդանիների ցեղերի, մշակաբույսերի սորտերի ստացումը:</p> <p>Գոյության կոիվ և նրա ձևերը: Բնական ընտրություն և նրա ձևերը: Էվոլյուցիայի այլ գործոններ:</p> <p>Թեմա 4. Օրգանիզմների հարմարվածությունը, ձևերը, հարմարվածության հարաբերական բնույթը:</p> <p>Միկրոէվոլյուցիա. Տեսակառաջացում, հասկացողություն պոպուլյացիոն և սիմպատրիկ տեսակառաջացման մասին:</p> <p>Մակրոէվոլյուցիա: Մակրոէվոլյուցիայի ապացույցները: Հասկացողություն էվոլյուցիայի ձևերի մասին: Էվոլյուցիայի հիմնական ուղղությունները և ուղիները: Կենսաբանական առաջադիմություն և հետադիմություն:</p> <p>Թեմա 5. Օրգանական աշխարհի զարգացումը:</p> <p>Մարդու ծագումը: Մարդու ծագման հիմնական վարկածները: Մարդու ծագման փուլերը:</p>
<p>Գնահատման մեթոդները և չափանիշները</p>	<p>Գիտելիքները գնահատվում են գրավոր աշխատանքով: Քննական տոմսը ներառում է տեսական հարցեր, թեստեր: Յուրաքանչյուր առաջադրանքի համար քննական տոմսում նշագվում է գնահատման համարժեք միավորը: Գրավոր աշխատանքը գնահատվում է առավերագույնը 20 միավոր:</p> <p>Ինքնուրույն աշխատանքը գնահատվում է առավերագույնը 20 միավոր: Գնահատման չափանիշներն են.</p> <ol style="list-style-type: none"> 1. Հարցը ներկայացված է ավարտուն 2. Կարողանում է տերմինները բացատրել 3. Խոսքը հստակ է, մատչելի 4. Պատրաստված է ցուցադրություն 5. Կիրառվել են տարբեր գրական աղբյուրներ և առկա են հղումները /0; 1-2; 3 և ավելի/ 6. Պատասխանել է հարցերի /0; 1-2; 3 և ավելի/ 7. Ձեկուցումը զիտական է 8. Կատարվել է համեմատական վերլուծություն 9. Ներկայացնում է կիրառական օրինակներ 10. Քննարկվող գործընթացները ներկայացվել են բույսի օրգանիզմի ամբողջականության համատեքստում <p>Յուրաքանչյուր չափանիշի համար սահմանված առավելագույն միավորը՝ 2 , չափանիշի պահանջը թերի կատարելու դեպքում՝ 1 միավոր, չկատարելու դեպքում՝ 0 միավոր: Գումարային գնահատականը կլինի ինքնուրույն աշխատանքի գնահատականը:</p>
<p>Գրականություն</p>	<p>Հիմնական-</p> <ol style="list-style-type: none"> 1. Բեգլարյան Ն.- Էվոլյուցիոն տեսություն /ուսումնական ձեռնարկ/, 1998 2. Константинов А. В. “Основы эволюционной теотии”, Минск, высшая школа, 2 – е изд. 1989 3. Яблонов А. В., Юсуфов А. Г. “Эволюционное учение”, М., 1991 4. Армен Л. Тахтаджян - Грани эволюции - 328 стр. 2007 5. Александр Белов - Тайна происхождения человека раскрыта! Теория эволюции и инволюции - 2009 6. Эволюционная биология. История и теория. Выпуск 3 - 2005 7. Л. Е. Гринин, А. В. Марков, А. В. Кортаев - Макроэволюция в живой природе и обществе - 248 стр. 2009 <p>Լրացուցիչ-</p> <ol style="list-style-type: none"> 1. Хайтун С. Д. - Феномен человека на фоне универсальной эволюции - 2009 2. Валерий Зосим - Эволюция предков человека - 2008 3. Э. М. Галимов - Феномен жизни. Между равновесием и нелинейностью.

	Происхождение и принципы эволюции	2009
	4. Эволюция человека в шестую расу?	2006